ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԻՆ ՀԱՎԱՏԱՓՈԽԵԼՈՒ ՆՐԱ ՓՈՐՁԵՐԸ (IV-V ԴԴ.)

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Զրադաշտականությունը հնագույն կրոններից է, որը լայնորեն տարածվեց Սասանյանների օրոք: 301 թվականից հայ ժողովրդի և Սասանյանների միջև կրոնի պահպանման համար դաժան պայքար սկսվեց, քանի որ Սասանյան բոլոր արքաները պահանջում էին հայերից հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել զրադաշտականություն: Հայերին կրոնափոխ անելու պարսից արքաների ջանքերը հանգեցրին 450-451 և 482-484 թվականների ապստամբություններին: Չնայած այն հանգամանքին, որ հայ ժողովուրդը մեծ կորուստներ և դժվարություններ է ունեցել, սակայն կարողացել է պահպանել քրիստոնեությունը և օրինակ ծառայել այլ քրիստոնյա ժողովուրդների համար:

Բանալի բառեր – զրադաշտականություն, քրիստոնեություն, կրոնական հարաբերություններ, Սասանյան Պարսկաստան, Հռոմեական կայսրություն:

Զրադաշտականությունը հնագույն կրոններից մեկն է: Այն իր անվանումը Արևմուտքում ստացել է հիմնադիր մարգարե Զարատուշտրայից, ով Հին Հունաստանում հայտնի էր Զրադաշտ անվամբ: Նա իրանցի էր, և ենթադրվում է, որ ապրել է Քրիստոսից առաջ՝ 1700-1500 թթ. միջև ընկած ժամանակահատվածում[1]: Այն լայն տարածում էր գտել Միջին և Մերձավոր արևելքում և իշխող կրոն էր հին իրանական թագավորություններում՝ սկսած մ. թ. ա. VI դարից մինչև մ. թ. VII դար: Զրադաշտականությունը հատկապես շունչ առավ Սասանյանների օրոք: Պապաքի որդի Արտաշիր թագավորը չորս տարվա ընթացքում կարողացավ ջլատել թուլացած պարթև Արշակունիների վերջին ուժերը, իսկ 227 թ. ապրիլի 28-ին տեղի ունեցած Որմիզդականի վճռական ճակատամարտում սպանվեց պարթևական վերջին թագավոր Արտավան V-ը[2]: Հիմք դրվեց իրանական նոր՝ Սասանյանների դինաստիային, որի իշխանությունը տարածվում էր նախկին Պարթևական թագավորության տարածքում: Սասանյանները զրադաշտական կրոնի մեջ մի քանի բարեփոխումներ կատարեցին և այդ կրոնը դարձրին պետական գաղափարախոսություն, որը հետագայում դարձավ քրիստոնեության գլխավոր թշնամին: Բարեփոխման նախաձեռնողները նշանավոր զրադաշտական աստվածաբաններ Կարտիրն

---

[1] **Boyce M.** Zoroastrians /Their religious beliefs and practices/. London, 1979, p. 2.

[2] Հայ ժողովրդի պատմություն /ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ/, հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում (այսուհետև՝ ՀԺՊ, հ. II), Երևան, 1984, էջ 23:

ու Մանին էին: Վերջինս հիմնադիր է «տիեզերական կրոնի»՝ մանիքեականության:

Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» աշխատության մեջ գրում է, որ մանիքեականները և զրադաշտականները նույն կրոնն ունեն, սակայն վարքով միմյանցից տարբերվում են: Նրանք երկուսն էլ իրենց համարում են արևի ծառաներ, կարծում են, թե բոլոր անշունչները շունչ ունեն, և ի վերջո երկուսն էլ «երկարամատյաններ»[3] են[4]:

Քուրմ-մոգպետ Կարտիրի ջանքերով ձևավորվող զրադաշտականությունը հայտարարվեց Երանշահիրի պետական կրոն, և սկսվեց դրա բռնի տարածումն ինչպես Իրանում, այնպես և նվաճված ու նվաճվող բոլոր երկրներում[5]: Կարտիրը մարտնչող զրադաշտական ուղղափառություն և ազգային եկեղեցի ստեղծեց, որը մոգերի կազմակերպություն էր[6]: Մոգպետ (մոբադան մոբադ) Կարտիրի դրդմամբ Արտաշիրը Հայաստանում քանդում է միհրական մեհյանները, հելլենիստական և տեղական աստվածների սրբավայրերը[7]: Ենթադրվում է, որ իբր պարթևական թագավորության ուշ շրջանում Հայաստանը գերազանցապես զրադաշտական հող էր[8]: Սակայն այդ կարծիքը թեական է: Մինչև Զրադաշտի կողմից նոր ուսմունքի քարոզը սկսելը՝ իրանական ցեղերը պաշտում էին Միթրա, Անահիտ, Վարունա և ուրիշ աստվածների: Դրանք հետագայում մտան նոր կրոնի՝ զրադաշտականության մեջ:

301 թ. հետո սկսվում են հայ ժողովրդի մաքառումները Սասանյան Իրանի դեմ՝ սեփական կրոնի և ազգային հոգևոր ինքնուրույնության պահպանման համար, քանի որ Սասանյան գրեթե բոլոր թագավորները ցանկանում էին, որ Հայաստանը հրաժարվի քրիստոնեությունից և որպես պետական կրոն ընդունի զրադաշտականությունը: Արդեն 387 թ. Մեծ Հայքը բաժանվեց Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև: Այս իրադարձությունը կարելի է համարել Արևելյան Հայաստանում զրադաշտականության դեմ հայերի մղած պայքարի սկիզբ: 395 թ., երբ Հռոմեական կայսրությունը փլուզվեց և բաժանվեց 2 մասի, Իրանը կրոնական հանդուրժողականություն էր ցուցաբերում թե՛

---

[3] Երկարամատյան ասելով Եզնիկ Կողբացին նկատի է ունեցել դուալիստ:
[4] **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, Երևան, 1994, էջ 95:
[5] ՀԺՊ, հ. II, էջ 53:
[6] **Фрай Р.** Наследие Ирана. Москва, 2002, стр. 302.
[7] **Վարդումյան Գ., Մարգարյան Ե.**, Կրոնների պատմություն, Հին կրոններ, Պրակ Ա, Երևան, 2006, էջ 66:
[8] **Boyce M**. Ibidem, p. 84.

Հայաստանի և թե՛ նորաստեղծ Արևելյան Հռոմեական կայսրության (Բյուզանդիայի) հետ ունեցած հարաբերություններում: Այդ շրջանում հայոց Վռամշապուհ արքայի (388-414 թթ.) օրոք տեղի ունեցավ հայոց գրերի ստեղծումը. «Ե դարի առաջին տարիները (405 թվին), Սահակ Մեծի հայրապետության օրով, որ դարձյալ Գրիգոր Լուսավորչի ցեղից էր, Ս. Մեսրոպը, Հայոց քրիստոնէութեան հին շրջանի ամենամեծ անձնաւորութիւնը Գրիգորից յետոյ, հնարեց Հայերէն գրերը: Այդ մեծ գործով Մեսրոպ Մաշտոցը դարձավ յուր ժողովրդի և հայկական քրիստոնէութեան փրկիչը»[9]: Գրերի գյուտն անհրաժեշտություն էր, որովհետև Հայ եկեղեցիներում ժամերգության լեզուն ասորերենն էր կամ հունարենը, որոնք հայ ժողովրդի լայն խավերի համար բոլորովին անհասկանալի էին[10]: Պատմահայր Խորենացին Մ. Մաշտոցի վերաբերյալ մեզ հաղորդում է. «Եւ տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք գծին՝ կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ»[11]: Ղազար Փարպեցին գրում է. «Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց, յերիւրելով զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան. տալով նմա օգնականս և այլ արս բանինունս և մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին առ սակաւ մի որպէս երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի յունարէն հեգենայինսն. որում առաջնոյն անուն էր Յոհան՝ ի գաւառէն Եկեղեաց, և երկրորդին Յովսեփ՝ ի Պաղանական տանէն, և երրորդին Տեր՝ ի Խորձենոյ, և չորրորդին Մուշէ՝ ի Տարօնոյ»[12]:

414 թվականին մահացավ հայոց Վռամշապուհ թագավորը, և քանի որ նրա որդի Արտաշեսը դեռ անչափահաս էր, հայոց նախարարների խնդրանքով պարսից արքա Հազկերտ I-ը հայոց գահին է վերահաստատում հայոց

---

[9] **Տէր-Մինասեան Ե.**, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 2009, էջ 49:

[10] **Մանանդյան Հ.**, Քննական Տեսություն Հայ Ժողովրդի Պատմության, Հ. Բ, Մասն Ա, Երևան, 1957, էջ 246:

[11] **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 327:

[12] **Ղազարայ Փարպեցւոյ** (այսուհետ՝ Ղազար Փարպեցի), Պատմութիւն հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 34:

թագավոր Խոսրով III-ին, որը Պարսկաստանում կալանքի տակ էր պահվում: Վերջինիս մահից հետո Հազկերտ I-ը Հայաստանի գահն այլևս չուզեց թողնել հայ Արշակունիների ձեռքում և Խոսրով III-ի հաջորդ նշանակեց իր Շապուհ որդուն (շուրջ 416-420 թթ.): Հազկերտ I-ը, որ իրազեկ էր հայ դպրության տարածմանն ու քրիստոնեության արմատացմանն ընդդեմ իրանական կրոնի՝ ջանում է աստիճանաբար Հայաստանում ուժեղացնել իրանական մշակույթը և պարսից պետական կարգերը[13]: Ղազար Փարպեցին գրում է. «Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանէր ի վերայ սոցա զիւր զորդին, որում անուն էր Շապուհ, ըստ անուան հօր իւրոյ»[14]: Հայոց աշխարհում թագավոր կարգված Շապուհը փոխանակ, հայերի վրա ազդեցություն գործելով, հետզհետե երկրում տարածեր մոգերի կրոնը, իր անձի հանդեպ ատելություն առաջացրեց[15]:

Վռամշապուհից հետո սկսվեց Արշակունիների դինաստիայի վերջնական մայրամուտը: Հայաստանը երեք տարի մնաց առանց թագավորի, մինչև որ պարսից արքա Վռամ V-ն Արտաշեսին (որը հայտնի էր Արտաշիր անունով) նշանակեց հայոց կառավարիչ: Վռամ V-ը միաժամանակ աջակցում ու պաշտպանում էր պարսկասեր նախարարներին[16]: Ի վերջո նա կարողացավ վերացնել հայկական պետականությունը[17] և 428 թ. Հայաստանի կառավարության գլուխ կարգեց պարսիկ մարզպան Վեհմիհրշապուհին: Սասանյան արքունիքը Հայոց կաթողիկոսությունը դիտում էր նաև իբրև քաղաքական իշխանություն, կաթողիկոսին համարում «իշխան ամենայն քրիստոնէից»[18]: Վռամ V-ի մահվանից հետո (438-ին կամ 439-ին) թագավորեց նրա որդի Հազկերտ II-ը[19]: Նա 442թ., հետ կանչելով Հայաստանի մարզպան Վեհմիհրշապուհին, նրա փոխարեն նշանակեց հայ նշանավոր նախարարներից մեկին՝ Սյունյաց Վասակ իշխանին[20]: Եղիշեն գրում է. «Վասն որոյ և աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրու-

---

[13] **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 278, 279:
[14] **Ղազար Փարպեցի**, էջ 42:
[15] **Аннинскій А.** История Армянской церкви (до XIX века). Кишиневъ, 1900, стр. 35.
[16] **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ. , էջ 282, 283:
[17] **Rawlinson G.** Ibidem, p. 403.
[18] **Վարդանյան Վ.**, Հայոց եկեղեցին՝ նախարարական պետականության հենարան (428-630-ական թթ.), ԼՀԳ, Երևան, 2015, № 1, էջ 213:
[19] **Նեօլդեքե Թ.**, Պատմութիւն Սասանեան Տերութեան, Վաղարշապատ, 1896, էջ 39:
[20] **Ша'бани Р.** Краткая история Ирана. Санкт-Петербург, 2008, стр. 138.

թեանն Շապհոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատկանդարան դեղեալ նետիւք: Եւ սկսաւ եղջեւր ածել անօրէնութեամբ, գոռոզանայր, և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալքս ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենօք»[21]:

439 և 440 թթ. մահացան Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը: Կաթողիկոսական Աթոռին հաստատվեց նրանց ավագագույն աշակերտներից Հովսեփ Հողոցմեցին: Վերջինս այդպես էլ պարսից արքունիքի կողմից կաթողիկոս չհաստատվեց՝ պաշտոնապես համարվելով տեղապահ մինչև իր նահատակությունը: Արդեն պարսից դրածո կաթողիկոս Սուրմակի մահից հետո հայոց եպիսկոպոսները հավաքվելով Հովսեփին կաթողիկոս հռչակեցին 444թ. Ս. Էջմիածնում գումարված եկեղեցական ժողովում: Այդպիսով, Հայ եկեղեցին վերածվեց ընտրովի Ազգային իշխանության[22]:

Հովսեփ կաթողիկոսի և մարզպան Վասակ Սյունու կարևոր ձեռնարկումներից մեկը եղավ Շահապիվանի ժողովի հրավիրումը: Հիմնվելով Ասողիկի մի հիշատակության վրա՝ կարող ենք ենթադրել, որ ժողովի հիմնական կազմակերպիչը Հովսեփ Հողոցմեցին էր. «Հովսեփը Հողոցիմ գյուղից արար ժողով ի Շահապիվանի, ուր զտուգանաւք կանոնսն կարգեցին»[23]: Այս եկեղեցական ժողովը կանոնական էր, սակայն նրա որոշումները, ի տարբերություն ուրիշ կանոնախմբերի, միակն են, որ հանցագործությունների համար պատիժներ են սահմանել և դրանով իսկ դուրս եկել կանոնական շրջանակներից ու ստացել դատաստանագրքի նշանակություն: Շահապիվանի եկեղեցական ժողովը կարևոր նշանակություն ունեցավ Հայ եկեղեցու հիմքերի ամրապնդման, եկեղեցական կարգ ու կանոնի վերահաստատման, հայ իրավական մտքի ձևավորման և զարգացման գործում:

440-ականների սկզբին Պարսկաստանի միջինասիական սահմանին կրկին ակտիվացել էին հեփթաղները, ուստի Պարսկաստանի հյուսիսարևելյան սահմանների պաշտպանության համար Հազկերտ II-ը հայոց այրուձին

---

[21] **Եղիշե**, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 12:

[22] **Վարդանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 215:

[23] **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական «Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ դար (այսուհետև՝ Ասողիկ), Երևան, 2011, էջ 687:

ուղարկել էր Մերվի օազիս, չնայած որ 387թ. պայմանագրով հայերին խոսք էր տրվել երկրից դուրս չբերել հայոց զորքերը: Հայոց այրուձին այնտեղ մնաց շուրջ 7 տարի (442-449թթ.): Այս քայլով փաստորեն Հազկերտ II-ը հայերին կտրել էր հայրենի երկրից ու ժողովրդից և անզոր էր դարձրել պարսից զորքի դեմ որևէ լուրջ քայլ ձեռնարկելու համար[24]:

447թ. Հայաստան եկավ Սասանյան արքունի ներկայացուցիչ Դենշապուհը, որը պետք է աշխարհագիր անցկացներ երկրում: Աշխարհագրից հետո հարկատու դարձավ նաև եկեղեցին, որը մինչ այդ ազատված էր ամեն տեսակի հարկերից: Այնուհետև Դենշապուհը պարսիկներ նշանակեց հազարապետության և «մեծի դատավորության» պաշտոններում՝ համապատասխանաբար փոխարինելով Վահան Ամատունուն և Հովսեփ Հողոցմեցուն: Սակայն սպարապետությունը մնաց հայերի ձեռքում՝ Մամիկոնյանների գլխավորությամբ: Իսկ պարսիկ դատավորը պետք է նպաստեր պարսից արքունիքի կրոնական քաղաքականությանը Հայոց երկրում[25]:

Իրանի զրադաշտական հոգևորականությունը քրիստոնեության հաջողությունները Հայաստանում ընդունում էր որպես վտանգ և Բյուզանդիայի հետ հայերի միանալու մշտական սպառնալիք: Սրանով է բացատրվում հայերին կրոնափոխ անելու պարսիկների անհագ ցանկությունը[26]: Շուտով պարսից մոգերի և պարսից հայտնի զորավար Միհրներսեհի խորհրդով Հազկերտ II-ը կրոնափոխության հրովարտակ է ուղարկում Հայաստան: Հայաստանը Պարսկաստանի համար Բյուզանդիայի դեմ պայքարի, Սիրիայի և Փոքր Ասիայի նկատմամբ վերահսկողություն սահմանելու ստրատեգիական շատ կարևոր կետ էր, իսկ Հայոց եկեղեցին խանգարում էր պարսիկների հետ հայերի կրոնամշակութային միաձուլմանը[27]:

Միայն կրոնական գործոնը չէր, որ ծնեց 450-451թթ. հայոց ապստամբությունը, որը ղեկավարում էր սպարապետ Վարդան Մամիկոնյանը, այլև Տիզբոնի արքունիքի կողմից սահմանված ծանր հարկերը, հայերի ներքին ուրույնությունը և մշակութային զարթոնքը վերացնելու փորձերը, հայ նախա-

---

[24] **Дмитриев В.** Всадник в сверкающей броне: Военное дело Сасанидского Ирана и история римско-персидских войн. Санкт-Петербург, 2008, стр. 214.

[25] **Յուզբաշյան Կ.**, Ավարայրի ճակատամարտից դեպի Նվարսակի պայմանադրությունը, Երևան, 1989, էջ 162:

[26] **Дьяконов М.** Очерк истории древнего Ирана. Москва, 1961, стр. 274.

[27] **Еремян. С.** Народно-освободительная война армян против персов в 450-455 гг. // Вестник древней истории, N 4, Ленинград, 1951, стр. 46.

բարների դարավոր իրավունքների սահմանափակումը և այլ պատճառներ: Սակայն Ավարայրի ճակատամարտը դարեր շարունակ մնաց որպես հայ ժողովրդի ազատասիրության և հայրենի ավանդներին ու քրիստոնեությանը հավատարիմ մնալու վառ վկայություն:

Ավարայրից հետո Հազկերտը հրաման էր տվել, որպեսզի հայերին կրոնի ընտրության ազատություն տրվի, սակայն կրոնական խտրականությունը չէր դադարում իր ազդեցությունը թողնել Հայաստանում[28]: Այսպես շարունակվում էր Հովսեփ կաթողիկոսին հաջորդած Մելիտե և Մովսես Մանազկերտցի կաթողիկոսների օրոք: Այս կաթողիկոսների օրոք պարսկամետ հոսանքն աշխատում էր արմատախիլ անել հունական ազդեցությունը[29]:

457թ. Հազկերտի որդի Պերոզը սպանել տվեց իր ավագ եղբայր Որմիզդին և 459թ. տիրեց պարսից գահին: Պերոզը ևս անհաշտ էր քրիստոնյաների նկատմամբ և պաշտպան կանգնեց Հռոմեական կայսրության կողմից հերետիկոս համարված Նեստորի վարդապետությանը ու նպաստեց, որ իր երկրի քրիստոնյաները հարեն այդ աղանդին[30]: Նա իր հոր պես հովանավորում և պաշտոններ էր տալիս հավատուրաց նախարարներին, իսկ քրիստոնյաներին մղում էր հետին պլան: Եվ քանի դեռ Հայաստանում տիրում էր նման իրավիճակ, եկեղեցին շարունակում էր կորցնել իր հետևորդներին և ազդեցությունը քաղաքական կյանքում[31]: Այս պայմաններում Հայաստանում զարգացան հակապարսկական տրամադրությունները և հետզհետե վերածվեցին մի նոր համաժողովրդական ելույթի, որի գլուխ կանգնեցին Վարդան Մամիկոնյանի եղբորորդի Վահան Մամիկոնյանը և Սահակ Բագրատունին: Նրանք շարունակեցին Ավարայրի հերոսների հայրենանվեր գործը:

484թ. հուլիսին պատերազմ է ծագում հեփթաղների և Պարսկաստանի միջև: Ճակատամարտում պարսից բանակը ծանր կորուստներ է կրում, և սպանվում է Պերոզ թագավորը: Նրան հաջորդում է իր եղբայր Բալաշը (Վաղարշ): Պարսից Վաղարշ արքան կատարում է հայերի առաջ քաշած բոլոր պայմանները, քանի որ չէր ցանկանում Պերոզի վարած դաժան քաղաքականության հետևանքով կորցնել Հայաստանի պես մի մեծ և օգտակար աշխարհ: Այսպիսով, Նվարսակում 484 թ. կնքվեց հաշտության պայմանագիր, ըստ որի՝ վերականգնվեցին նախարարների նախկին արտոնությունները, քրիստոնեու-

---

[28] **Վարդանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 217:
[29] **Լեո,** Հայոց պատմություն, հատոր Բ, Երևան, 1967, էջ 90:
[30] **Նեօլդեքե Թ.**, նշվ. աշխ., էջ 41:
[31] **Аннинскій А.** Указ. соч. , стр. 51.

թյունը ճանաչվեց որպես Հայաստանի պաշտոնական կրոն: Նախարարների գերագույն դատավորը կարող էր լինել միայն արքան և ոչ թե մարզպանը[32]: Հայաստանի մարզպան նշանակվեց Վահան Մամիկոնյանը[33]:

Վաղարշից հետո նոր պարսից թագավոր է դառնում Պերոզի որդի Կավատը (488-531): Վերջինս պահանջում է հայերից աջակցել պարսիկներին Բյուզանդիայի դեմ մղվելիք առաջիկա պատերազմում: Վահան Մամիկոնյանը, չցանկանալով թշնամության առիթ տալ կայսրությանը, մերժեց այս պայմանները: Դրանից հետո Կավատը պատերազմ սկսեց հայերի դեմ, որն ավարտվեց վերջիններիս պարտությամբ: Հայերը հարկադրված եղան ընդունել Կավատի առաջադրած պայմանները՝ միևնույն ժամանակ առաջ քաշելով իրենցը: Դրանց մեջ հիմնականն այն էր, որ հայկական եկեղեցին ճանաչվի անկախ, ընդունվի Սասանյան պետության հովանավորության տակ և պաշտպանվի նեստորական հոգևորականության ու զրադաշտական մոգերի ոտնձգություններից: Կավատն ընդունեց այդ պայմանները և 501 թ. հատուկ հրովարտակ արձակեց, ըստ որի՝ նեստորական եկեղեցու կողքին հայկական եկեղեցին պաշտոնապես ճանաչվում էր անկախ և ինքնուրույն: Այդպիսով, Սասանյանները վերականգնեցին իրենց գերիշխանությունը Հայաստանում[34]:

Այսպիսին էր Սասանյան վարչակարգի և մասնավորապես V դարում զրադաշտականության մղած պայքարն ընդդեմ Հայ առաքելական եկեղեցու: Թեպետ հայերն ունեցան մեծ կորուստներ, կրեցին ծանր զրկանքներ, այդուհանդերձ կարողացան պահպանել քրիստոնեական կրոնը և օրինակ ծառայել մյուս քրիստոնյա ժողովուրդներին:

ЗОРОАСТРИЗМ И ЕГО ПОПЫТКИ СМЕНИТЬ ВЕРУ АРМЯН (IV-V ВВ.)

АРМЕН ТЕР-ГРИГОРЯН

Зороастризм является древнейшей религией, которая получила широкое распространение во времена Сасанидов. С 301 года начинаются ожесточенные бои армянского народа с Сасанидами за защиту своей собственной религии, потому что почти все сасанидские цари требовали от армян отказаться от христианства и в качестве государственной религии принять

[32] ՀԺՊ, հ. II, էջ 206:
[33] **Ղազար Փարպեցի**, էջ 429, 431, 433:
[34] ՀԺՊ, հ. II, էջ 209, 210:

зороастризм. Попытки персидских царей заставить армян сменить веру породили армянские восстания 450-451 и 482-484 годов. Несмотря на то, что армянский народ имел большие потери и трудности, все же ему удалось сохранить христианство и послужить примером для других христианских народов.

Ключевые слова – зороастризм, христианство, религиозние отношения, Сасанидский Иран, Римская империя.

THE SASSANID DYNASTY'S ATTEMPTS TO CONVERT ARMENIANS TO ZOROASTRIANISM (IV-V CENTURIES)

ARMEN TER-GRIGORYAN

Zoroastrianism is one of the world's oldest monotheistic religions, which widely spread during the Sassanid dynasty. The Armenians' struggles against the Sassanids to preserve Christianity since 301, in view of the fact that almost all Sassanid kings used to force the Armenians to renounce christianity and convert to zoroastrianism and accept it as the state religion. However, the fierce efforts of the persian kings to convert armenians led to the two rebellions of the Armenian people in the years 450-451 and 482-484. In spite of the fact that the Armenian people all through many centuries suffered great losses and difficulties yet they managed to preserve Christianity and serve as an example to follow for other Christian peoples.

Key words – Zoroastrianism, Christianity, religious relations, Sassanid Iran, the Roman Empire.